Ե. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԲՐՈՒՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՁԵՌՔԻ ԴՈՒՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

(Ըստ ազգագրական նյութերի)

Հայաստանի բրուտագործության ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ համեմատարար ոչ մեծ տերիտորիայում կարելի է հանդիպել վերապրուկային կարգով մինչև մեր օրերը պահպանված կավե ամանեղեն պատրաստելու տեխնիկայի գրեթե բոլոր ձևերին սկսած ամենապրիմիտիվից, վերջացրած բարձր զարգացման հասած հաստոցային տեխնիկայով, միաժամանակ ուրվագծել այն ուղիները, որոնցով ընթացել է այդ զարգացումը։ Չնայած այդ հնարավորություններին, սույն բնագավառը Հայաստանում ազգագրական տեսակետից բոլորովին չի հետազոտված։ Ազգագրական գրականության մեջ դեռևս չկա թեկուզ մի հոդված, ուր քննված լիներ Հայաստանի բրուտագործության այս կամ այն կողմը։ Մինչդեռ Հայաստանի տնայնագործական արտադրության այդ բնագավառի ուսումնասիրությունը կարևոր է նրանով, որ դեռևս մինչև XX դարի սկզբները զգալիորեն պահպանված կավագործության եղանակները ամենուր աստիճանաբար վերանում են։

Ներկայացվող հոդվածում փորձում ենք լուսաբանել բրուտագործության զարգացման որոշ կարևոր կողմեր։ Հայաստանի տարբեր շրջաններում մեր հավաքած նյութերը արտացոլում են զարգացման զանազան աստիճանները[1]։

Ամանեղենի կաղապարման հնագույն միջոցը համարվում է այսպես կոչված կավասվաղ հենքով կաղապարումը[2]։ *Դեռևս նեոլիթի շրջանում, հյուսածո հենքի սվաղման եղանակը փոխարինվում է ծեփածո տեխնիկայով, որի դեպքում ամանեղենը կաղապարվում է շարքերով միմյանց վրա դարսվող և ձեռքով հարթեցվող կավի երկարուն գալարներից։ Կարելի է ասել, որ կավե ամանեղեն պատրաստելու տեխնիկայի այդ պրիմիտիվ ձևը վիթխարի դեր է խաղացել խեցեգործական արտադրության կազմավորման գործում։ Դրանից է սկիզբ առնում բրուտային տեխնիկայի ամբողջ հետագա զարգացումը, որը թեև շատ դանդաղ է ընթացել, փոխակերպվելով մի շարք անցումային աստիճաններում, սակայն հասել է ամենարարձր զարգացմանը՝ բրուտի դուրգի հայտնագործմանը։ Նույնիսկ այն ժամանակ, երբ ոտքի դուրգի հանդես գալով բրուտությու-*

---

1 *Հոդվածը գրված է 1965—1967 թթ. Հայկական ՍՍՀ ԴԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական իմբարշավի կազմում (պետ. Դ. Ս. Վարդումյան) Աշտարակի, Ապարանի, Սպիտակի, Գուգարքի, Ստեփանավանի, Ալավերդու, Անիի, Ամասիայի և Ախուրյանի շրջաններում, ինչպես նաև անհատական ուղևորության ժամանակ Արարատյան դաշտավայրի (Արտաշատի, Վեդու, Էջմիածնի, Հոկտեմբերյանի շրջանների) գյուղերում Հայաստանի բրուտագործության վերաբերյալ հեղինակի հավաքած նյութերի հիման վրա։*

2 Л. В. Арциховский, Основы археологии, М., 1954, стр. 48. Б. Л. Богоевский, История техники, М., 1937, стр. 213. А. Б. Салтыков, Избранные труды, М, .1960, стр. 364.

նը վեր է ածվում ուրույն արհեստի, ծեփածո տեխնիկան շարունակում է գոյատևել ի դեմս բրուտության գյուղական օջախների, դրանով իսկ հնարավորություն ընձեռելով մեկնաբանելու կավե ամանեղենի պատրաստման հնագույն տեխնիկան և բացահայտելու զարգացման այն ուղիները, որոնք հասցրին պատեցման մտահղացմանն ու հայտնաբերմանը։

Պատեցնող հարմարանքի պարզագույն և ամենավաղ տեսակը բրուտի ձեռքի դուրգն է, որը կավագործության զարգացման մեջ ներկայացնում է անցումային փուլ պրիմիտիվ ձևից դեպի ամենազարգացածը։

Բրուտի ձեռքի դուրգի առաջացումը տարբեր երկրներում տարբեր կերպ է թվագրվում՝ Առաջավոր Ասիայում[3] և Եգիպտոսում[4] մ. թ. ա. IV հազարամյակով, Եվրոպայի տարբեր մասերում[5], ինչպես նաև ՍՍՀՄ տերիտորիայում[6] մ. թ. ա. III հազարամյակով։ Բրուտի դուրգի առաջացումը Հայկական բարձրավանդակում վերագրվում է մ. թ. ա. II հազարամյակի կեսերին։ Սակայն չի նշվում, թե դուրգի որ տիպի մասին է խոսքը՝ ձեռքի, թե ոտքի։ Ըստ երևույթին նկատի է առնվում ձեռքի դուրգը, քանի որ ոչ մի տեղ Անդրկովկասում, ներառյալ նաև Հայաստանը, առայժմ այդ ժամանակի ոտքի դուրգ հայտնի չէ, իսկ դատել բրուտի այս կամ այն դուրգի մասին, առաջնորդվելով լոկ ամանեղենի արտաքին տեխնիկական նշաններով, այնքան էլ համոզիչ չէ։

Հնագույն քաղաքակրթության նույնիսկ այնպիսի օջախներում, ինչպիսիք են Միջագետքն ու Եգիպտոսը, խեցեգործական իրերը երկար ժամանակ պատրաստվել են բրուտի ձեռքի դուրգով, մի կտոր կավից ման ձևավորելու հնարքով։ Այդ են վկայում մ. թ. ա. III հազարամյակի վերջերին վերաբերող Թեբեի և Մեմֆիսի կատակոմբների որմնանկարները, ուր պատկերված են կավի կաղապարման զանազան դրվագներ, որոնք ըստ էության նույնն են, ինչ այժմյանը, բայց կաղապարման դուրգը ավելի պարզ է սարքված՝ առանց վարի սկավառակի, և պատեցվում է ձեռքով[7]։

Այդ կերպ կաղապարված ամանեղենը արտաքին նշաններով քիչ է տարբերվում հետագայում բրուտի ոտքի դուրգով սարքված ամանեղենից։

Հնում բրուտի ձեռքի դուրգի հետ ոտքի դուրգով ամանեղեն կաղապարելու հնարների զուգորդման մասին խոսում է նաև Հ. Բլյումները։ Ըստ որում ձեռքի դուրգը պատեցրել է բրուտի աշկերտը, այնպես որ բրուտի զույգ ձեռքն էլ ազատ է մնացել, ինչպես մնում է ոտքի դուրգով աշխատելիս[8]։

Զգման տեխնիկայով մի գունդ կավից ձեռքի դուրգով ամանեղեն կաղապարելու հնարները մինչև հիմա էլ լայնորեն կիրառվում են ՌՍՖՍՀ-ում[9]։

---

3 См. Итина, Первобытная керамика Хорезма, «Труды хорезмской археолого-этнографической экспедиции», IV, М., 1959, стр. 22.

4 А. В. Арциховский, Նշվ. աշխ., էջ 61։

5 Б. Л. Богоевский, Նշվ. աշխ., էջ 442։

6 А. А. Бобринский, Р. М. Мунчаев, Из древнейшей истории гончарного круга на Северном Кавказе, «Краткие сообщения института археологии», М., вып. 108, 1966, стр. 98.

7 В. И. Селезнев, Производство и украшение глиняных изделий, СПб., 1894, стр. 168.

8 H. Blümner, Technologie und Terminologie der gewerbe und Künste bei Griechen und Römen, II, 1879, էջ 47։

9 А. А. Бобринский, К изучению техники древнерусского гончарста, «Вестник Московского университета», сер. IX, «История», 2, 1962, стр. 44.

Ելնելով վերևում ասվածից, միանգամայն պարզ է դառնում, որ ամանների արտաքին նշանները ոչ թե կապված են դուրգի կառուցվածքի յուրահատկությունների, այլ կաղապարման այն հնարների հետ, որոնք իրենք՝ վարպետները, կոնկրետ պայմաններից ելնելով, հարմարեցնում են գործիքի այս կամ այն տիպին։

Նկ. 1. Հայ կնոջ ձեռքի դուրգ

Դատելով բրուտի ձեռքի դուրգերի շինվածքի մեծ բազմազանությունից, կարելի է ենթադրել, որ դրանց գործածումն ընթացել է միևնույն կերպ, տարբերվելով միայն դրանցից յուրաքանչյուրի յուրօրինակությամբ պայմանավորված կառուցվածքի ավել կամ պակաս կատարելագործվածությամբ։ Այդ են ցույց տալիս միևնույն անշարժ սոնակի շուրջը վերին կլորակի ապատ պտտման սկզբունքով շինված բրուտի ձեռքի դուրգերի ներկայումս էլ գոյատևող գանազան տեսակները։

Այսպիսին է, օրինակ, հայ կավագործուհիների ձեռքի դուրգը, որը ինչպես իր կառուցվածքով, այնպես էլ տեխնիկական նվաճումով՝ պտտեցման առավել իներցիայի ձեռք բերմամբ, որոշակի տեղ է գրավում գոյություն ունեցող բազմազան ձեռքի դուրգերի մեջ։

Հայ վարպետուհիների ձեռքի դուրգը ներկայացնում է մի ոչ մեծ սարք, բաղկացած մինչև 35—50 սմ տրամագիծ և 7—10 սմ հաստություն ունեցող փայտե բոլորակ սկավառակից։ Սկավառակի կենտրոնում, դրա հաստության կեսի չափով փոսիկ է արված, որով սկավառակը նստում է գետնին դրված տափակ բարի մեջ կիպ ամրացրած բավական երկար (բարձրությունը՝ 40 սմ) փայտե սոնակի մի բիչ կլորացրած վերջույթին։ Որպեսզի դուրգը չտարուբերվի երկար սոնակի շուրջը ու չծռվի մի կողմից մյուսը, նրան հարմարեցված է զանգվածել խաչկապով պահվող փայտե շորս ճաղ։ Խաչկապի բարձրության կեսից մի բիչ ցած արված անցքով ազատորեն անցնում է սոնակը։ Ստացված լավ հարմարեցված սարքը շարժման մեջ է դրվում գործող դուրգի հետ միասին, նպաստելով պտտեցման իներցիայի ուժեղ զարգացմանը՝ առանց տատանողական շարժումների։

Բրուտի հայկական ձեռքի դուրգի կատարելագործվածության մասին կարելի է դատել մյուս ժողովուրդների դուրգերի հետ այն համեմատելու միջոցով։ Այսպես, Մոսկվայի մարզի ռուսների մեջ գոյություն ունեցող ձեռքի պտտեցման դուրգը իրենից ներկայացնում է 15—20 սմ տրամագծով, 2—3 սմ հաստությամբ կլորակով թեթև տիպի դուրգերի ամենապարզագույն կառուցվածք։ Կլորակը հագցված է աթոռակի տախտակի միջով ազատորեն անցնող և վերջույթով աթոռակի ոտքերի մեջտեղի շորսուի փոսիկին հենված երկաթե

սոնակին[10]։ Ավելի պարզ շինվածք ունի մորդվական կճուճագործուհիների դուրգը։ Այն կազմված է սոճու տախտակից, որի մեջտեղը դամված է անշարժ «պոստար»՝ երկսանտիմետրանոց կեչու բարակ մեխը, որի շուրջն էլ պտտվում է դուրգը։ Իր պրիմիտիվության հետևանքով, մորդվական կճուճագործուհիների դուրգը չի կարող դարգացնել նույնիսկ անհրաժեշտ իներցիան[11]։ Հայկական դուրգերի համեմատությամբ շատ պրիմիտիվ է նաև դաղստանցի կին բրուտների դուրգը, թեև շինված է, գործող դուրգի մակերեսի մեծացման և հիմքի մակերեսի փոքրացման սկզբունքով, հիմքին էլ ամրացված է, կարճ սեպիկ, որի շուրջը պտտվում է, գործող դուրգը[12]։



Նկ. 2. Մորդվացիների ձեռքի դուրգ

Հայերի մերձավոր հարևաններից հարկ է նշել վրացի կանանց երկու տարատեսակով հանդիպող ձեռքի դուրգը[13], շինված միևնույն սկզբունքով, միմյանցից տարբերվելով վերին պտտվող կլորակի տարբեր ձևերով։ Այսպես, ձեռքի դուրգի մի տեսակի գործող սկավառակը ներկայացնում է մի ամբողջական փայտե կլորակ, հորիզոնական հարմարեցված փայտե ոչ բարձր կոճղակիս, որը հագցված է երկճյուղ փայտե հիմքին ամրացված սոնակին։ Դուրգի երկրորդ տեսակն առաջինից տարբերվում է նրանով, որ գործող սկավառակի վարի երեսին տրված է հատած կոնի ձև։

Ինչպես տեսնում ենք, վրաց, նաև մորդվա վարպետուհիների բրուտի դուրգերը, ինչպես և մյուս նկարագրածները, իրենց շինվածքով հեռու չեն գնացել այն նախնական ձևից, երբ ամանը սարքելիս, դուրգի փոխարեն, հենց նույն պրիմիտիվ ծեփածո տեխնիկայի դեպքում, օգտագործվել է անշարժ հարմարանք, որը կարելի է ենթադրել, որ հետագայում հանգեցրել է պտտեցման մտահղացմանն ու հայտնաբերմանը։ Ըստ որում, անցումը պրիմիտիվ տակդիրից պտտեցման հայտնաբերմանը կատարվել է մոտավորապես հետևյալ կերպ։

Շինվող ամանի համար որպես տակդիր սկզբում օգտագործվել են բոլորաձև ծանր տափակ բարերը։ Նման տակդիրները անհրաժեշտ են եղել միայն

---

10 М. В. Воеводский, К истории гончарной техники народов СССР, «Этнография», М.—Л., 1930, № 4, стр. 68.

11 Д. Зеленин, Примитивная техника гончарства «наленом» в Восточной Европе, «Этнография», М.—Л., 1927, № 1, стр. 91.

12 Е. Шиллинг, Художники Балхара, «Народное творчество», 1937, № 2—3, стр. 60—62.

13 Վրաստանի պետ. թանգարան, դույքահամար 65—39/29։

նրա համար, որպեսզի հնարավոր լիներ տեղաշարժել պատրաստվող ամանը առանց այն այլաձևելու վտանգի։ Քարե ծանր տակդիրները հետագայում փոխարինվել են կավե կամ բակորե ավելի թեթև կլորակներով։ Որպեսզի վերջինները կարելի լիներ իրենց վրա գրված ամանեղենի հետ միասին հեշտ ու արագ տեղաշարժել, սկսել են դրանք հարմարեցնել ոչ բարձր տակդիրների վրա։ Որոշ վայրերում, ինչպես, օրինակ՝ Հայաստանի Սպիտակի շրջանի Պարնի և Դեղարոտ գյուղերում, այդպիսի տակդիր են ծառայել աթոռակներն ու անկանոն ձևի ծանր քարերը, այլ վայրերում (ինչպիսիք են Անիի, Ապարանի, Ախուր-



Նկ. 3. Վրաց կանանց ձեռքի դուրգ

յանի և մի քանի ուրիշ շրջաններ) բերանքսիվայր դրված հատած կոնի ձևի կավե ամանները (անգանակ և այլն)։ Ստացվել է տարրական գլանաձև շարժման համար լավ հարմարեցված սարք՝ տակդիրի փոքր մակերեսով և կլորակի մեծ մակերեսով։ Տակդիրի հետ կլորակի շփման մակերեսի փոքրացումը նպաստել է սահքի առաջացմանը, որը զգալիորեն դյուրացրել ու արագացրել է աշխատանքի պրոցեսը, քանի որ վրան դրված ամանի հետ միասին կլորակը հեշտ պտտեցնելու դեպքում, վարպետուհու միայն մի ձեռքն էր ապատ մնում։

Այդպիսի շարժման կուտակված փորձի օգտագործումը ըստ երևույթին հետագայում հասցրել է անշարժ հարմարանքի կատարելագործմանը և դրա վերածմանը բրուտի ձեռքի դուրգի։

Այդպիսի անցման հնարավորությունը կարելի է դիտել Շիրակի ազգագրական շրջանի կոնկրետ նյութով։ Միևնույն ծեփածո տեխնիկայի պայմաններում անշարժ հարմարանքով և բրուտի ձեռքի դուրգով ամանեղեն պատրաստելու միաժամանակյա գոյությունը Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղում մեծ հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու այն ուղիները, որոնցով ընթացել է անցումը պրիմիտիվ տակդիրից ձեռքի պտտեցմամբ դուրգին։ Մոտավորապես այդպիսի անցում է ներկայացված նաև Դ. Կ. Զելենինի աշխատանքում[14], նման

[14] Д. К. Зеленин. Նշվ. աշխ., էջ 95։

անցման լիակատար հնարավորության լուրջ փաստարկներ է բերում նաև Ե. Մ. Պեշչերևան[15]։

Այսպիսով, բրուտի ձեռքի դուրգի հայտնագործմամբ որոշվում է բրուտային տեխնիկայի զարգացման հետագա այն ստադիաներից մեկը, որը կանխատեսում է նախորդ ստադիաներում հիմք առած հնարավորությունների ակընհայտ զարգացում։

Ամանեղենի կաղապարումը բրուտի ձեռքի դուրգով կատարվում է նույն տեխնիկայով, ինչ որ ձեռքով ծեփելիս՝ առանց պտտեցում կիրառելու։

Աշխատանքի ձեռնարկելուց առաջ, վարպետուհին դուրգը պատում է ավազի բարակ շերտով, որպեսզի կավը չկպչի դուրգին։ Ապա կավի ընդհանուր պաշարից առանձնացնում է մի փոքր գունդ, ձեռքերով այն տափակացնելով, դարձնում է 1 սմ հաստությամբ կլորակ բլիթ և դնում բրուտի դուրգի մեջտեղը։ Այդ կերպ տեղադրված ապագա ամանի հատակը («որք») վարպետուհին մատերով սղալում է դուրգին, որպեսզի ապագա ամանը դուրգի վրա պինդ կանգնի։ Այնուհետև, հատակի եզրերից 1 սմ ետ քաշելով, դույլ ձեռքի մատներով ճընշում է այն, անելով փոսիկ, դրանով իսկ բարձրացնելով հատակի կողերը։ Երբ հատակը պատրաստ է լինում, վարպետուհին ձեռքերի ափերով գրտնակում է 25 սմ երկայնքով մի քանի գլանիկ և դուրգը ձախ ձեռքով ստեպ-ստեպ դանդաղ դարձնելով ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ, աջով ձգում է գլանիկները մաս առ մաս, դրանք բոլորակ շարքերով միմյանց վրա դնելով, ձախով միաժամանակ բռնելով գլանակի շամրացված ծայրը։ Մնացած գլանիկները նույն կերպ են ծեփվում, բայց արդեն ոչ թե հատակին, այլ վարի գլանիկներին։ Յուրաքանչյուր գլանիկ ծեփելուց հետո, դրանց միացման տեղում ամանը ներսի կողմից կոկվում է։ Այդ կերպ ծեփելով ամանի ամբողջ իրանը, բկի հետ միասին, վարպետուհին դուրգը դանդաղ պտտեցնելով, աջ ձեռքի մեծ մատով բկի վերևում ոչ խոր ակոս է անում, փոքր-ինչ շուռ տալով բկի եզրը։ Ապա բկի դարձված եզրը թաց լաթով առնելով աջ ձեռքի մեծ մատի և կեռացրած ցուցամատի մեջ, ձախ ձեռքով դուրգը դանդաղ պտտեցնելով, հանում է ամանի շուրթը։

Այդ կերպ կաղապարած ամանը թողնվելով դուրգի վրա, ենթարկվում է մշակման։ Այժմ արդեն դուրգը աջ ձեռքի արագ հրումներով պտտեցվում է հակառակ կողմ, այսինքն՝ աջից ձախ, ձախ ձեռքով էլ ամանին ուղղահայաց բռնելով կոկիչը, հղկում է այն, վերացնելով անհարթությունները, ամանին տալով կլորություն և միօրինակություն։ Ապա ջրում պարբերաբար թրջվող լաթի օգնությամբ այն կոկում է։

Պատրաստի ամանը դուրգից հանելուց առաջ, վարպետուհին փայտե քերիչով մաքրում է հատակին կպած կավի կտորները և դույլ ձեռքերի ափերով ամանի կողերից բռնելով, դնում է այն դետնին ու անցնում հաջորդ ամանի կաղապարմանը։

Բրուտի ձեռքի դուրգի առավելությունը նրանումն է, որ դուրգի շնորհիվ զգալիորեն հեշտանում ու արագանում է ամանեղենի պատրաստման գործը, քանի որ աշխատանքի ընթացքում վարպետուհու աջ ձեռքը, իսկ պատեցման իներցիայի ժամանակ՝ նաև ձախ ձեռքը ազատ են մնում։ Դուրգով պատրաս-

---

15 Е. М. Пещерева. Гончарное производство Средней Азии. М.—Л., 1959, էջ 46։

տած ամանեղները աչքի է ընկնում համաչափությամբ, ձևերի բոլորակությամբ, խեցու միօրինակությամբ և այլն։

Ամենուր, որտեղ կիրառվում է բրուտի ձեռքի դուրգը, ամանեղենի կաղապարմամբ բացառապես կանայք են զբաղվում։ Այդ հանգամանքն էլ հենց բացատրվում է ծեփածո տեխնիկայի աշխատանքին բրուտի դուրգի հարմարեցվածությամբ, այսինքն՝ կավե ամանեղեն պատրաստելու այն պրիմիտիվ եղանակներով աշխատելու տեխնիկային, որոնցով կանայք ամանեղեն են պատրաստել իրենց տնային տնտեսության մեջ։ Ամանեղենի կաղապարման այդ եղանակները տղամարդիկ երբեք չեն ընդօրինակել, դեռ ավելին, այն դիտվել է որպես կանացի զբաղմունք։

Տղամարդկանց նման վերաբերմունքը ծեփածո տեխնիկայի նկատմամբ առաջացել է հնավոր անցյալում։ Ինչպես արդեն ասվեց, նույնիսկ այն ժամանակ, երբ դեռևս ստեղծված չի եղել բրուտի ոտքի դուրգը և մասնագետ բրուտները ստիպված են եղել աշխատելու ձեռքի դուրգով, ամանեղենի կաղապարումը կատարվել է ոչ թե ծեփման տեխնիկայով, որին հարմարեցված է եղել ձեռքի դուրգը, այլ կավի գնդի ձգման տեխնիկայով, ինչպես դա արվում է ոտքի դուրգով։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ նյութեր հավաքելիս ձեռքի դուրգի կիրառությունը արձանագրված է միայն գյուղական վայրերում, իսկ ոտքի դուրգինը՝ այդ արհեստի թե՛ քաղաքային և թե՛ գյուղական օջախներում։

Այսպիսով, տվյալ հոդվածում հեղինակը կենցաղում պահպանված նյութերի հիման վրա փորձում է բնութագրել հայերի բրուտագործական ձեռքի դուրգը, դրանով կավե ամանեղեն պատրաստելու եղանակի յուրահատկությունները և ձեռքի դուրգի տեղն ու նշանակությունը Հայաստանի խեցեգործության զարգացման մեջ։